ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 55

«18» 06 2018 թ.Ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ԿՈԼԵԳԻԱՅԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 12-Ի ՆԻՍՏՈՒՄ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՄԱՆ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՄՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության դատախազության կոլեգիան 2018 թվականի հունիսի 12-ի նիստում քննարկել է «Կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու և կալանքի ժամկետը երկարացնելու մասին միջնորդությունների հիմնավորվածության պրակտիկային առնչվող հարցերը՝ ՀՀ դատախազության կոլեգիայի 2017թ. օգոստոսի 4-ի նիստում ընդունված որոշման կատարման համատեքստում» հարցը և ընդունել համապատասխան որոշում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով, 22-րդ հոդվածի 5-րդ մասով և 30-րդ հոդվածով՝

Հրամայում եմ՝

1. Ապահովել Հայաստանի Հանրապետության դատախազության կոլեգիայի 2018 թվականի հունիսի 12-ի նիստում ընդունված որոշման կենսագործումը (12.06.2018թ. նիստի N 2 արձանագրությունը կցվում է):

2. Սույն հրամանի կատարման վերահսկողությունը դնել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալների վրա՝ ըստ նրանց հանձնարարված ոլորտների:

3. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին և ավագ դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին և ավագ դատախազին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին և Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին:

Ա.ԴԱՎԹՅԱՆ

Արձանագրություն N 2

Հայաստանի Հանրապետության դատախազության կոլեգիայի
2018 թվականի հունիսի 12-ի նիստի

Նախագահում էր՝ ՀՀ գլխավոր դատախազ Ա.Դավթյանը:

Մասնակցում էին
կոլեգիայի անդամներ՝ Ա. Հարությունյանը, Հ.Ասլանյանը, Դ.Մելքոնյանը, Վ.Հարությունյանը, Վ.Մուրադյանը, Արտակ Հարությունյանը, Ա.Մարուխյանը, Գ.Բաղդասարյանը, Վ.Դաֆայելյանը, Գ.Պողոսյանը, Ե.Ավագյանը, Ա.Սիմոնյանը, Ա.Փանոսյանը:

ՕՐԱԿԱՐԳ

1. «Կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու և կալանքի ժամկետը երկարացնելու մասին միջնորդությունների հիմնավորվածության գործնականում հանդիպող թերությունների վերացման նպատակով օրենսդրական և նախադեպային չափորոշիչների արդյունավետ կիրառման» վերաբերյալ ՀՀ դատախազության կոլեգիայի 2017թ. օգոստոսի 4-ի որոշման պահանջների կատարման համատեքստում կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու հիմնավորվածության ապահովման հարցեր.

2. Սպանության և սպանության փորձի, հասարակական հնչեղություն ունեցող այլ ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների վերաբերյալ ընթացքի մեջ գտնվող կամ վարույթը կասեցված քրեական գործերով քննության արդյունավետության բարձրացման հարցեր.

1. Լսելով և քննարկելով կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու և կալանքի ժամկետը երկարացնելու մասին միջնորդությունների հիմնավորվածության պրակտիկային առնչվող հարցերի մասին Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազ Ա.Դավթյանի ելույթը՝ Հայաստանի Հանրապետության դատախազության կոլեգիան արձանագրում է կալանքի՝ որպես խափանման միջոցի կիրառման օրինականության նկատմամբ խիստ և ակտիվ դատախազական հսկողության շարունակական ապահովման կարևորությունը:

Փաստելով, որ թեև ՀՀ դատախազության կոլեգիայի 2017թ. օգոստոսի 4-ի նիստում ընդունված որոշման հետևողական կատարման արդյունքում էապես նվազել են ինչպես կալանքը որպես խափանման միջոց ընտրելու, դրա ժամկետը

երկարացնելու վերաբերյալ դատարան ներկայացվող չհիմնավորված միջնորդությունների քանակը և դրանով պայմանավորված՝ նաև կալանքը որպես խափանման միջոց կիրառելու դեպքերը, այնուամենայնիվ, կոլեգիան արձանագրում է, որ առկա ձեռքբերումները չեն կարող դիտվել որպես այս ոլորտում դատախազության կողմից նախանշված նպատակի ամբողջական կենսագործում: Սկսված բարեփոխումների շարունակականության համատեքստում խնդրի արագ և արմատական լուծման հրամայականն առաջ է բերել համարժեք և կտրուկ միջոցառումներ ձեռնարկելու անհրաժեշտություն:

Կոլեգիան արձանագրում է, որ թեև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածում նախատեսված կալանավորման կիրառման հիմքերն ունեն կանխատեսական բնույթ, մինչև 5 տարի ժամկետով ազատազրկում նախատեսող հանցագործությունների կատարման համար մեղադրվող անձանց նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդություն պետք է դատարան ներկայացվի բացառապես այն դեպքերում, երբ գործով ձեռք բերված ապացույցները ոչ թե հնարավորություն են տալիս կանխատեսելու մեղադրյալի հետագա ոչ պատշաճ կամ հակաօրինական վարքագծի հավանականությունը, այլ երբ հիմնավորվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածով նախատեսված հիմքերի իրական առկայությունը: Այլ խոսքով, մեղադրյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու համար գործող օրենսդրությամբ նախատեսված «մեղադրյալի կողմից կանխատեսվող գործողությունների կանխման» գաղափարը ոչ մեծ կամ, որպես կանոն, միջին ծանրության հանցագործությունների դեպքում պետք է փոխարինվի ազատությունից զրկելու առավել խիստ պահանջներ նախատեսող՝ «մեղադրյալի կողմից արդեն իսկ կատարված գործողությունների համար» մոտեցմամբ՝ նպատակ ունենալով հետագայում կանխել մեղադրյալի նման վարքագիծը:

Կոլեգիան կարևորում է, որ կալանքի ժամկետների երկարացման դեպքում մանրամասն քննության առարկա դառնան կալանավորման հիմքերի իրական շարունակականության առկայությունը, ինչպես նաև վարույթն իրականացնող մարմինների կողմից նախաքննության խնդիրների լուծմանն ուղղված պատշաճ ջանասիրության ցուցաբերումը:

Միաժամանակ, քրեական գործերի քննության բնականոն ընթացքը, ինչպես նաև դատավարության մասնակիցների իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությունը երաշխավորելու նպատակով կոլեգիան կարևորում է, որ բոլոր այն դեպքերում, երբ մեղադրյալի նկատմամբ ընտրվի ազատությունից զրկելու հետ չկապված խափանման միջոց, վերջինիս վարքագիծը գտնվի իրավասու մարմինների անընդհատ և խիստ հսկողության ներքո: Հետաքննության մարմինը պետք է ձեռնարկի օրենքով նախատեսված բոլոր անհրաժեշտ միջոցները՝ մեղադրյալի կողմից անազատության հետ չկապված խափանման միջոցի պայմանների խախտման յուրաքանչյուր դեպք անմիջապես վեր հանելու և արձանագրելու, դրան համարժեք արձագանքելու և այդ մասին վարույթն իրականացնող մարմնին անհապաղ տեղեկացնելու համար: Իր հերթին վարույթն

իրականացնող մարմնին անհապաղ տեղեկացնելու համար: Իր հերթին վարույթն իրականացնող մարմինը քննության ողջ ընթացքում պետք է ձեռնարկի անհրաժեշտ քրեադատավարական միջոցներ՝ ստուգելու համար նույն պայմանների պատշաճ պահպանումը մեղադրյալների կողմից:

Ազատության մեջ գտնվող մեղադրյալի կողմից «ոչ պատշաճ» վարքագծի յուրաքանչյուր դրսևորում պետք է հանգեցնի համարժեք քրեադատավարական հետևանքների:

Վերը նշված նպատակների ամբողջական կենսագործման համար կարևորելով այլընտրանքային խափանման միջոցների ներդրման անհրաժեշտությունը, արձանագրելով նման խափանման միջոցների կիրառման նկատմամբ հսկողություն իրականացնող լիազոր մարմնի առկայությունը, միևնույն ժամանակ հաշվի առնելով ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի ընդունման ժամկետների հարցում որոշակիության բացակայությունը, կոլեգիան անհրաժեշտ է համարում միջազգային փորձի ուսումնասիրության հենքի վրա մշակել կալանավորման՝ որպես խափանման միջոցի կիրառման իրավակարգավորումների, այդ թվում՝ այլընտրանքային խափանման միջոցների ներդրմանն առնչվող օրենսդրական փոփոխությունների փաթեթ, և միջոցներ ձեռնարկել հանրային մասնակցությունն ապահովելու նպատակով մասնագիտական շահագրգիռ շրջանակների, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ նախագիծը քննարկելու ուղղությամբ:

Ելնելով վերոգրյալից՝

ԿՈԼԵԳԻԱՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. **ՀՀ գլխավոր դատախազության մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ վերահսկողության, հատկապես կարևոր գործերով քննության նկատմամբ հսկողության, հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների քննության նկատմամբ հսկողության, կոռուպցիոն և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչությունների պետերին, ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության զինվորական ծառայության դեմ ուղղված հատկապես կարևոր գործերով քննության նկատմամբ հսկողության, կայազորների զինվորական դատախազությունների գործունեության նկատմամբ վերահսկողության բաժինների պետերին ու ավագ դատախազներին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին՝**

Քրեական գործով վարույթի ընթացքում խափանման միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելիս ապահովել, որպեսզի.

1) ոչ մեծ կամ միջին ծանրության (մինչև 5 տարի ժամկետով ազատազրկում նախատեսող) հանցագործությունների համար մեղադրվող անձանց նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդություն դատարան ներկայացվի միայն այն դեպքում, երբ գործով ձեռք բերված փաստական տվյալների որոշակի ամբողջությամբ կհիմնավորվի, որ մեղադրյալն արդեն իսկ կատարել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված որևէ գործողություն,

2) նման հանցագործությունների համար մեղադրվող անձանց նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդություն դատարան ներկայացվի նաև այն դեպքում, երբ մեղադրյալը ՀՀ տարածքում չունի բնակության մշտական վայր կամ մեղադրվում է կազմակերպված խմբի կամ հանցակցությամբ կոռուպցիոն բնույթի հանցանք կատարելու համար և քրեական գործով ձեռք բերված նյութերը բավարար հիմք են տալիս ենթադրելու, որ ազատության մեջ մնալով, մեղադրյալը կխոչընդոտի մինչդատական վարույթում կամ դատարանում գործի քննությանը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու, գործի համար նշանակություն ունեցող նյութերը թաքցնելու կամ կեղծելու, քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով առանց հարգելի պատճառների չներկայանալու կամ այլ ճանապարհով:

3) ծանր կամ առանձնապես ծանր հանցագործությունների համար մեղադրվող անձանց նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդություն դատարան ներկայացնելիս անշեղորեն պահպանվեն «Կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու և կալանքի ժամկետը երկարացնելու մասին միջնորդությունների հիմնավորվածության գործնականում հանդիպող թերությունների վերացման նպատակով օրենսդրական և նախադեպային չափորոշիչների արդյունավետ կիրառման» վերաբերյալ ՀՀ դատախազության կոլեգիայի 2017թ. օգոստոսի 4-ի որոշման պահանջները:

4) կալանքի ժամկետների երկարացման մասին միջնորդություն դատարան ներկայացվի միայն այն դեպքում, երբ գործով ձեռք բերված ապացույցների մանրամասն վերլուծության արդյունքում հաստատվում է կալանավորման հիմքերի իրական շարունակականության առկայությունը, իսկ վարույթն իրականացնող մարմինների կողմից դրսևորվել է նախաքննության խնդիրների լուծմանն ուղղված պատշաճ ջանասիրություն:

5) խափանման միջոց ընտրելու կամ դրա ժամկետը երակարացնելու հարցի քննարկման յուրաքանչյուր դեպքում պարտադիր դիտարկվի այլընտրանքային խափանման միջոցների կիրառման հնարավորության հարցը և մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդություն դատարան ներկայացվի բացառապես այն դեպքերում, երբ խափանման այլ՝ ազատությունից զրկելու հետ չկապված միջոցների (հատկապես գրավ, անձնական երաշխավորություն և կազմակերպությունների

երաշխավորություն) կիրառումը օբյեկտիվորեն չի կարող երաշխավորել քրեական գործով վարույթի ընթացքում մեղադրյալի պատշաճ վարքագիծը:

6) եթե մեղադրյալի նկատմամբ կիրառվել է կալանք խափանման միջոցը՝ պայմանավորված միայն վերջինիս քրեական վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու վտանգով, ապա պաշտպանության կողմի՝ կալանքը գրավով փոխարինելու մասին միջնորդություն ներկայացնելու դեպքում դատախազը մասնակցի նշված միջնորդության դատարանում քննարկմանը և, եթե ներկայացված պատճառաբանությունները հիմք են տալիս ենթադրելու, որ այլընտրանքային խափանման միջոցի կիրառումն օբյեկտիվորեն կարող է ապահովել մեղադրյալի պատշաճ վարքագիծը, չառարկել դրա դեմ՝ որպես առավել արդյունավետ միջոց դիտարկելով մեղադրյալի պատշաճ վարքագծի երաշխավորումն ապահովող չափով, այդ թվում՝ անշարժ գույքի տեսքով, գրավի կիրառումը:

7) Մեղադրյալի նկատմամբ ազատությունից զրկելու հետ չկապված խափանման միջոց կիրառելու դեպքում, հանձնարարել հետաքննության մարմնին մեղադրյալի վարքագծի նկատմամբ սահմանել անընդհատ և խիստ հսկողություն, արձանագրել մեղադրյալի կողմից անազատության հետ չկապված խափանման միջոցի պայմանների խախտման յուրաքանչյուր դեպք և այդ մասին անհապաղ հայտնել վարույթն իրականացնող մարմնին: Միաժամանակ, ցուցում տալ քննիչին՝ քրեական գործի քննության ընթացքում քննչական գործողությունների միջոցով ստուգելու մեղադրյալի կողմից նույն պայմանների (մասնավորապես, մեղադրյալի կողմից դատավարության մասնակիցների նկատմամբ որևէ կերպ ներգործություն չունենալու հանգամանքի) պահպանումը: Նշված պայմանների խախտումների մասին տեղեկություններ ստանալու դեպքում անհապաղ քննարկել կիրառված խափանման միջոցը փոխելու հարցը:

8) ուսումնասիրել ընթացիկ քրեական գործերը, որոնցով մեղադրյալների նկատմամբ կալանքը կիրառվել է որպես խափանման միջոց և նախաձեռնել կիրառված խափանման միջոցի փոփոխության հարցը, եթե մեղադրյալների կալանավորումը կամ կալանավորման ժամկետի երկարացումը չի համապատասխանում սույն որոշման 1-ից 4-րդ կետերում նշված չափանիշներին:

2. ՀՀ գլխավոր դատախազության մեղադրանքի պաշտպանության և դատական ակտերի բողոքարկման, հատկապես կարևոր գործերով քննության նկատմամբ հսկողության, հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների քննության նկատմամբ հսկողության, կոռուպցիոն և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչությունների պետերին, ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության զինվորական ծառայության դեմ ուղղված հատկապես կարևոր գործերով քննության նկատմամբ հսկողության, կայազորների զինվորական դատախազությունների գործունեության նկատմամբ վերահսկողության բաժինների պետերին ու ավագ դատախազներին, մարզերի, Երևան քաղաքի,

Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին՝

Դատարաններում քննվող գործերով կրկին անգամ քննության առարկա դարձնել ամբաստանյալների նկատմամբ կիրառված կալանք խափանման միջոցի փոփոխության հարցը, եթե խափանման միջոցի կիրառումը չի համապատասխանում սույն որոշման 1-ից 4-րդ կետով նախատեսված չափանիշներին, ընդհուպ՝ միջնորդության ներկայացնել կիրառված խափանման միջոցը փոփոխելու վերաբերյալ:

3. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանին, ՀՀ գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչության պետին՝

10-օրյա ժամկետում միջազգային փորձի ուսումնասիրությամբ նախապատրաստել կալանավորման՝ որպես խափանման միջոցի կիրառման իրավակարգավորումների, այդ թվում՝ այլընտրանքային խափանման միջոցների ներդրմանն ուղղված օրենսդրական փոփոխությունների փաթեթ: Միջոցներ ձեռնարկել մասնագիտական շահագրգիռ շրջանակների, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ նշված օրենսդրական փաթեթը քննարկելու ուղղությամբ:

2. Քննարկելով չբացահայտված, նաև վարույթները կասեցված սպանության և սպանության փորձերի դեպքերի, ինչպես նաև հանրային հնչեղություն ստացած այլ ծանր և առանձնապես ծանր, կոռուպցիոն և տնտեսական բնույթի հանցագործությունների դեպքերով հարուցված քրեական գործերի քննության նկատմամբ դատախազական հսկողության արդյունավետության բարձրացման խնդիրները՝ կոլեգիան արձանագրում է, որ վերջին շրջանում հանցավորության դեմ պայքարում իրավապահ մարմինների գործունեությունից հանային սպասումներին զուգահեռ, նկատելիորեն աճել է այդ պայքարում քաղաքացիների կողմից իրավապահ մարմիններին աջակցություն ցուցաբերելու պատրաստակամությունն ու տրամադրվածությունը: Այս հանգամանքը նոր նախադրյալներ է ստեղծում չբացահայտված, այդ թվում հանրային առանձնահատուկ ուշադրության արժանացած ծանր հանցագործություններով քննվող գործերի վարույթներում ներգրավված անձանց հետ ավելի սերտ համագործակցություն ծավալելու և դա հանցագործությունների կանխարգելմանն ու բացահայտմանը ծառայեցնելու առումով առավել նպատակային դարձնելու համար: Վերջինիս անհրաժեշտությունը մշտապես կարևորվել է հատկապես չբացահայտված սպանությունների և սպանության փորձերի, ինչպես նաև ծանր և առանձնապես ծանր այլ հանցագործությունների դեպքերով հարուցված այն քրեական գործերով, որոնց

քննության լիարժեքության և օբյեկտիվության վերաբերյալ մինչ այս հանրության մոտ առկա են եղել չփարատված կասկածներ կամ մտահոգություններ:

Կոլեգիան փաստում է, որ օգտագործելով հանրային աջակցության այս ռեսուրսը, անհրաժեշտ է դատախազական ներգործության անհրաժեշտ միջոցների գործադրմամբ էականորեն ակտիվացնել նմանատիպ հանցագործությունների, դրանք կատարողների բացահայտմանը, քրեական պատասխանատության անխուսափելիության ապահովմանն ուղղված աշխատանքները:

Բազմաթիվ գործերով, որոնցով համարվել է, որ արվել է առավելագույնը, հարկավոր է ակտիվացնել նախաքննությունը, անհրաժեշտության դեպքում վերսկսել կասեցված վարույթները: Ըստ այդմ՝ ըստ ենթակայության, դատախազության ստորաբաժանումների ղեկավարների կողմից այդ գործերով պետք է հետաքննության համապատասխան մարմիններին տրվեն հանձնարարություններ՝ կտրուկ ակտիվացնել օպերատիվ-հետախուզական աշխատանքները: Ընդ որում՝ հանձնարարականները չպետք է կրեն ձևական բնույթ. հստակ պետք է նշել՝ կոնկրետ ում կամ ինչ ուղղություններով պետք է իրականացվեն օեպրատիվ-հետախուզական միջոցառումներ: Բացի դրանից, այդ բոլոր գործերով պետք է ակտիվ քննչական գործողություններ սկսելուն ուղղված ցուցումներ տրվեն քննիչներին:

Դատախազական ներգործության գործիքակազմի կիրառմամբ անհրաածեշտ է միջոցներ ձեռնարկել հատկապես ՀՀ ԱԱԾ քննչական վարչության, ՀՀ ՀՔԾ-ի և ՀՀ ՔԿ ՀԿԳ քննության վարչության վարույթներում գտնվող նման գործերով քննության պլանների թարմացման, քննչական գործողությունների նոր ուղղությունների մշակման ուղղությամբ: Հատկապես կարևորվում է մարտիմեկյան դեպքերին կատարված սպանությունների բացահայտումը, որոնց քննության արդյունավետության բարձրացմանը նպաստելու նպատակով, օգտվելով «Դատախազության մասին» ՀՀ նոր օրենքով ստեղծված հնարավորությունից, ձևավորվել է նախաքննության նկատմամբ հսկողության դատախազների խումբ, և արդեն իսկ հետաքննության մարմիններին տրվել են օպերատիվ–հետախուզական աշխատանքներ կատարելու հանձնարարականներ:

Կոլեգիան մեծապես կարևորում է նմանատիպ գործերով վարույթի ակտիվ մասնակիցների՝ դիմում-բողոքների կապակցությամբ կամ անհատական նախաձեռնությամբ պարտադիր անձնական ընդունելությունների կազմակերպումը՝ արդյունավետ համագործակցության ձևավորման, ինչպես նաև քննության ուղղությունների ճիշտ տակտիկական մոտեցումները ձևակերպելու նպատակով:

Բացի վերոնշյալ գործերից, կոլեգիան կարևորում է նաև դատախազական մեխանիզմների կիրառմամբ խոշոր հարկերից խուսափելու, կանխամտածված սնանկության հատկանիշներով հարուցված և կասեցված, ՀՀ դատախազության համար առաջնահերթություն հանդիսացող կոռուպցիոն բնույթի քրեական գործերով քննության արդյունավետությունը բարձրացնելու, դրանցով ևս ծավալուն օպերատիվ-հետախուզական աշխատանքներ և քննչական ու դատավարական գործողությունների կատարումը պահանջելու խնդիրը:

Ուսումնասիրության առարկա պետք է դարձնել նաև ՀՀ գլխավոր դատախազի և նրա տեղակալների կողմից հետաքննության մարմիններին օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու նպատակով տրված հանձնարարությունների կատարման վիճակը՝ ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների բացահայտման տեսանկյունից դրանց իրացման արդյունավետությունը գնահատելու և համապատասխան հետևություններ կատարելու համար:

Ելնելով վերոգրյալից՝

ԿՈԼԵԳԻԱՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. **ՀՀ գլխավոր դատախազության հատկապես կարևոր գործերով քննության նկատմամբ հսկողության, հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների քննության նկատմամբ հսկողության, վարչությունների պետերին, ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության զինվորական ծառայության դեմ ուղղված հատկապես կարևոր գործերով քննության նկատմամբ հսկողության, բաժնի պետին ու ավագ դատախազներին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին՝**

Ուսումնասիրել վերջին 10 տարվա ընթացքում կատարված և չբացահայտված սպանությունների, սպանության փորձերի ու հանրային հնչեղություն ունեցող այլ ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների դեպքերով հարուցված և նախաքննության փուլում գտնվող կամ վարույթը կասեցված քրեական գործերը, դրանցով հետաքննության մարմիններին տալ կոնկրետ, գործում առկա տվյալներով պայմանավորված առարկայական օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու վերաբերյալ հանձնարարականներ՝ ըստ անհրաժեշտության նշելով կոնկրետ անձանց շրջանակը, որոնց նկատմամբ անհրաժեշտ է ձեռնարկել նման միջոցառումներ, ինչպես նաև ցուցում տալ քննիչներին նշված հանցագործությունների բացահայտման ուղղությամբ կոնկրետ քննչական և դատավարական գործողություններ, այդ թվում՝ լրացուցիչ հարցաքննություններ կատարելու վերաբերյալ՝ անհրաժեշտության դեպքում վերսկսելով կասեցված քրեական գործի վարույթը:

Տրված հանձնարարությունների և դրանց պատասխանների պատճեններն ուղարկել, ըստ ՀՀ դատախազության կանոնակարգի 3-րդ և 4-րդ գլուխների, նշված ոլորտում վերահսկողություն իրականացնող ՀՀ գլխավոր դատախազության կամ զինվորական կենտրոնական դատախազության համապատասխան ստորաբաժանում:

2. **ՀՀ գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչության պետին՝**

Ուսումնասիրել 2018թ. ընթացքում ՀՀ գլխավոր դատախազի և նրա տեղակալների կողմից ՀՀ ոստիկանությանը տրված օպերատիվ հանձնարարությունների կատարման ընթացքը, ամփոփել դրանց արդյունքները (դրանցից քանիսն են հանգեցրել հանցագործության կոնկրետ դեպքերի բացահայտմանը) և վերլուծության արդյունքները ներկայացնել ՀՀ գլխավոր դատախազին:

3. ՀՀ գլխավոր դատախազության հատկապես կարևոր գործերով քննության նկատմամբ հսկողության վարչության պետին՝

2008 թվականի մարտի 1-ին և 2-ին Երևան քաղաքում տեղի ունեցած իրադարձությունների կապակցությամբ քննվող քրեական գործով կատարել առարկայական, ամենօրյա հետևողական հսկողություն, հետաքննության մարմնից պարբերաբար տեղեկանալ կատարվող օպերատիվ-հետախուզական միջոցառումների ընթացքի և արդյունքների վերաբերյալ, նախաքննության արդյունավետությունն ու բազմակողմանիությունն ապահովելու նպատակով, պարբերաբար թարմացնել քննչական պլանը՝ քննության ընթացքով պայմանավորված անհրաժեշտ քննչական և դատավարական գործողությունների ժամանակին կատարումն ապահովելու նպատակով:

4. ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետին՝

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի քննչական վարչությունում քննվող և վարույթը կասեցված խոշոր կամ առանձնապես խոշոր չափերով հարկեր, տուրքեր և պարտադիր այլ վճարումներ կատարելուց չարամտորեն խուսափելու, ինչպես նաև կանխամտածված սնանկության դեպքերով քննվող կամ վարույթը կասեցված քրեական գործերով օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու վերաբերյալ կոնկրետ հանձնարարություններ տալ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի համապատասխան ստորաբաժանմանը, ինչպես նաև համապատասխան ցուցումներ քննիչներին՝ կոնկրետ քննչական և դատավարական գործողություններ կատարելու վերաբերյալ՝ անհրաժեշտության դեպքում վերսկսելով քրեական գործի վարույթը:

5. ՀՀ գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչության պետին՝

Ներկայացնել աշխատանքային խումբ ստեղծելու մասին հրամանի նախագիծ՝ Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և մարզերի դատախազների կողմից 2018 թվականի ընթացքում վերադասության կարգով տրված ցուցումների օրինականությունն ու հիմնավորվածությունը ստուգելու նպատակով:

6. ՀՀ գլխավոր դատախազության վարչությունների և ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին ու ավագ դատախազներին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին՝

Ակտիվացնել քաղաքացիների ընդունելության գործընթացը, ապահովել յուրաքանչյուր դիմումատուի ընդունելությունը համապատասխան դատախազի, վերադաս դատախազների մոտ, ընդունելություններին ակտիվ մասնակից դարձնել փաստաբաններին:

7. ՀՀ գլխավոր դատախազության պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության վարչության պետին՝

5-օրյա ժամկետում մշակել և ՀՀ գլխավոր դատախազին ներկայացնել ՀՀ գլխավոր դատախազի և նրա տեղակալների կողմից ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց ընդունելություն կազմակերպելու ընթացակարգ:

ԿՈԼԵԳԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀ,
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ՝ Ա.ԴԱՎԹՅԱՆ

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ-ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ
ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ՝ Ա.ՄԱՐՈՒԽՅԱՆ